ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՄԻՄՅԱՆՑ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
առաջնորդվելով դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայով,
հիմնվելով փոխադարձ շահավետության սկզբունքի վրա,
բարեկամական խորհրդակցությունների միջոցով
պայմանավորվում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

1. Չինական կողմը հայկական կողմին անհատույց օգտագործման է տրամադրում երկու շենքեր իրենց հարակից հողատարածքներով եւ կառույցներով, ներառյալ՝ ավտոտնակ՝ Պեկինի Չաոյանցույ Թայուաննանսյաոձեի 9 հասցեում: Հողատարածքը 3174.99 քառ. մետր է, իսկ երկու շինությունների տարածքը՝ 2734.65 քառ. մետր: Վերոնշյալ շենքերի, հողատարածքի եւ հարակից կառույցների, ներառյալ ավտոտնակը, հատակագծերը սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածն են եւ դրա բաղկացուցիչ մասը:
2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված շենքերից մեկը՝ 592.58 քառ. մետր տարածքով, հայկական կողմին կփոխանցվի 2006 թվականի փետրվարի 28-ին: Մինչեւ այդ ժամկետը հայկական կողմին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում է Պեկինի դիվանագիտական Թայուան թաղամասի 9-րդ շենքի, 1-ին մուտքի 31-րդ բնակարանը, ներառյալ նույն հասցեում գտնվող ստորգետնյա ավտոկանգառը:

ՀՈԴՎԱԾ 2

1. Հայկական կողմը չինական կողմին անհատույց օգտագործման է հանձնում Երեւան քաղաքի Մարշալ Բաղրամյան 12 հասցեում տեղակայված շինությունը՝ հարակից կառույցներով: Հողատարածքի մակերեսը 2500 քառ. մետր է, իսկ շինությանը՝ 758.2 քառ. մետր: Վերոնշյալ շենքի, հողատարածքի եւ հարակից կառույցների հատակագծերը սույն Համաձայնագրի 2-րդ Հավելվածն են եւ դրա բաղկացուցիչ մասը:
2. Հայկական կողմը Իսակովի պողոտայում 2.5 հա մակերեսով հողատարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում է չինական կողմին՝ դեսպանատուն կառուցելու համար: Հողատարածքի նախագիծը սույն Համաձայնագրի 3-րդ Հավելվածն է եւ նրա բաղկացուցիչ մասը:

ՀՈԴՎԱԾ 3

1. Հայկական կողմը ստանձնում է Պեկինի Չաոյանցույ Թայուաննանսյաոձեի 9 հասցեում գտնվող շինության վերանորոգումն ու հոգում անհրաժեշտ ծախսերը:
2. Չինական կողմը ստանձնում է Մարշալ Բաղրամյան 12 հասցեում գտնվող տան վերանորոգումն ու հոգում անհրաժեշտ ծախսերը:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հոդվածներում նշված հողատարածքներում շինարարությունը, ընդլայնումը եւ վերանորոգումն իրականացնում են Կողմերը՝ տեղական օրենքներին համաձայն եւ իրավասու մարմինների թույլտվությամբ: Բոլոր ծախսերը հոգում է հողատարածքն օգտագործող Կողմը:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հոդվածներում նշված հողատարածքներում շինարարության, ընդլայնման եւ վերանորոգման աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր Կողմ ինքնուրույն է հրավիրում հյուրընկալ կամ սեփական երկրի ընկերություններին՝ նախագծման, շինարարական աշխատանքների, վերահսկման, ստուգման եւ ընդունման համար: Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերն ու տեխնիկան երկիր են ներմուծվում առանց մաքսային զննման: Հյուրընկալ երկիրը պայմաններ է ստեղծում վերոնշյալ աշխատանքներն իրականացնող անձնակազմի համար մուտքի արտոնագրեր ձեւակերպելու ժամանակ:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հոդվածներում նշված հողատարածքներում կառուցվելիք կառույցները կարող են դառնալ վերոնշյալ կառույցները կառուցած Կողմի սեփականությունը: Շինարարության ավարտից անմիջապես հետո կառույցը կառուցած Կողմին մյուս Կողմը օժանդակություն կցուցաբերի դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործում:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրում նշված հողատարածքներն ու շինությունները օգտագործվում են բացառապես դիվանագիտական եւ հյուպատոսական ծառայողական նպատակների, ինչպես նաեւ դիվանագիտական անձնակազմի տեղավորման համար: Դրանց օգտագործումը այլ նպատակների համար անթույլատրելի է: Կողմերից ոչ մեկը չի կարող, առանց մյուս Կողմի թույլտվության, որեւէ տեսքով վաճառել, վարձակալության տալ կամ փոխանցել սույն Համաձայնագրում նշված հողատարածքները եւ շինությունները:

ՀՈԴՎԱԾ 8

Այն դեպքում, եթե հայկական կողմը, քաղաքաշինական կամ այլ հանգամանքներից ելնելով, ցանկանա, որ չինական կողմը վերադարձնի սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված հողատարածքը, նա պետք է տեղեկացնի այդ մասին չինական կողմին ոչ ուշ, քան հետ վերցնելուց մեկ տարի առաջ՝ փոխարենը չինական կողմին տրամադրելով նման պայմաններով եւ նույն չափին համարժեք այլ տարածք: Հայկական կողմը փոխհատուցում է չինական կողմին վերադարձվող հողատարածքի վրա գտնվող՝ վերջինիս կողմից կառուցված շինությունների արժեքը, որը ելնելով իրական վիճակից համաձայնեցվում է Կողմերի կողմից:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին Կողմերի միմյանց ծանուցելու պահից եւ գործում է 70 տարի: Սույն Համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ այլ հարցերի հետ կապված՝ Կողմերը խորհրդակցությունների մեջ են մտնում գործողության ժամկետի լրանալուց մեկ տարի առաջ:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունները Կողմերը կարգավորում են բարեկամական խորհրդակցությունների միջոցով:

Կատարված է Պեկին քաղաքում 2005 թ. հունիսի 13-ին, երկու օրինակով,

յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում որեւէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. ապրիլի 5-ից: